

Մ. Այվազեան-Թերզեան, *Պրոֆեսոր Հրաչեայ Աճառեանը Եւ Իրանագիտութիւնը*, «Հասարակական Գիտութիւնների եւ Մշակութային Հետազոտութիւնների Ինստիտուտ», Թեհրան, 2004, հինգ + 91 էջ (պարսկերէն):

«Հրաչեայ Աճառեանը սովետական հայագիտութեան աւագ սերնդի խոշորագոյն ներկայացուցիչներից մէկն է. գիտելիքների հսկայական պաշարով, բազմակողմանիութեամբ ու խորութեամբ եւ գիտական արտակարգ բեղմնաւորութեամբ նա 20րդ դարի հայագիտութեան բացառիկ դէմքերից մէկն էր, որ հսկայական աւանդ է թողել հայագիտութեան գանձարանում»: Այսպէս է ահա բնութագրում ականաւոր գիտնականին լեզուաբան Էդուարդ Ադայեանը *Հայերէն Արմատական Բառարանի* երկրորդ հրատարակութեան սկզբում գետնդրած ներածականում¹: Ասումին որեւէ այլ յայտելով կատարելը շատ դժուար է, բացի, թերեւս այն՝ որ աճառեանական վաստակը ամէնեւին անմշան չէ մաւել իրանական բանասիրութեան շատ խնդիրների լուսաբանման եւ իրօք անգնահատելի՝ իրանագիտութեան հայկական դպրոցի սկզբնաւորման եւ կայացման գործում: Չնայած սրան, աճառեանագիտութիւնը ցարդ չէր անդրադարձել մեծամուն գիտնականի իրանագիտական ժառանգութեանը. մի ժառանգութիւն, որի կերտմանը հայագիտութեանը զուգահեռ կամ, աւելի ճիշտ, հայագիտութեան հետ մէկտեղելով, երկար տարիներ անխուճ կերպով լծուել էր պրոֆ. Աճառեանը՝ հետեւելով իր մեծամուն ուսուցիչներ Անտուան Մէյէի եւ Հայմրիխ Հիւբմանի օրինակին:

Ահաւասիկ, այս բացը լրացնելու է գալիս իրանահայ գիտնական, հայագետ-արեւելագետ Մ. Այվազեան-Թերզեանի մեծագրութիւնը, որը, ի վերջոյ, ուշագրաւ է մաւել այն հանգամանքով, որ Աճառեանի իրանագիտական աշխատանքները ներկայացնում է դրանից բոլորովին անտեղեակ պարսկալեզու ընթերցողին:

Գիրքը բացում է մէկ էջանոց «Նախաբան»ով, որտեղ հեղինակը, շարադրում է աշխատութեան հիմնական նպատակները: Սրան անմիջապէս յաջորդող «Ներածութեան» մէջ (էջ 3-18) բաւական մանրամասն անդրադարձ է կատարում պատմութեան քառուղիներում հայերի եւ իրանցիների ունեցած երկարատեւ փոխառնչակցութիւններին, սպառիչ ակնարկների տեսքով ներկայացում է հայ պատմիչների եւ հետազոտողների երկերի կարեւորութիւնը Իրանի պատմութեան եւ մշակոյթի զանազան հարցերի լուսաբանման համար: Սահմանափակ էջերի շրջանակում Այվազեան-Թերզեանին հիանալի կերպով յաջողում է առանց տուեալ դէպքում աւելորդ մանրամասների իր ընթերցողին ծանօթացնել հայ գրչութեան Ոսկեդարից մինչեւ Ի. դարի կէսերը այս ասպարէզում ստեղծուած հսկայական ժառանգութեան հետ:

Ինչ որ առումով «Ներածական» կարելի է համարել մաւել մեծագրութեան «Հրաչեայ Աճառեանի Կեանքը Եւ Գիտական Գործունէութիւնը» խորագիրը կրող առաջին մասը (էջ 19-31), որտեղ հեղինակը յստակ ժամանակագրական յաջորդականութեամբ ընթերցողի ուշադրութիւնը բեւեռում է մեծամուն գիտ-

նականի կենսագրության եւ գիտական գործունէութեան զանազան կողմերի վրայ: Յօգուտ ընթերցողին խախտելով կենսագրական ակնարկի խիստ գիտական եւ չոր շարադրանքն ու իր գրուածքին հաղորդելով փոքր ինչ գեղարուեստականութիւն՝ Այվազեան-Թերզեանը գրքի այս հատուածում բացայայտում է ոչ միայն Աճառեան-գիտնականին, այլեւ Աճառեան-մարդուն ընդհանրապէս: Ակնարկի վերջում կցուած է նշանաւոր գիտնականի մասին գրուած գրքերի եւ յօդուածների լիակատար ցանկը:

Աշխատութեան հիմնական շարադրանքը սկսում է «Իրանական Ազգագրութեան Եւ Կրօնների Վերաբերեալ Հրաշեայ Աճառեանի Ուսումնասիրութիւնները» գլխով (էջ 33-51): Այս ասպարէզում իրականացրած Աճառեանի հետազօտութիւնները հիմնուած են նրա կողմից Ի. դարի սկզբներին Իրանի տարբեր վայրերում գրի առնուած դաշտային նիւթերի եւ անձնական դիտարկումների վրայ: Իրանական կենցաղին, ազգագրութեանը եւ կրօններին նուիրուած գիտնականի դիտարկումների մի մասը գետեղուած են 1967ին Երեւանում լոյս ընծայուած *Կեանքիս Յուշերից* ինքնակենսագրական երկում: Այվազեան-Թերզեանը պարսկերէն թարգմանութեամբ լայնօրէն մէջբերում է այս գրքի առանձին հատուածներ, դրանց աւելացնելով սեփական նկատողութիւնները, իսկ որոշ դէպքերում ներգրաւում հրապարակում առկայ նորագոյն ուսումնասիրութիւնների տուեալները: Այսպէս է, ասենք, առաջին անգամ 1925ին հրապարակուած «Գիրաններ Եւ Թումարիներ» *Միլի Հակոբ* ծայրայեղ շիական աղանդի թաւրիգեան համայնքին նուիրուած ակնարկի պարագայում²: Ամբողջական պարսկերէն թարգմանութեամբ մէջբերելով այս համառօտ բայց խիստ արժեքաւոր գործը՝ Այվազեան-Թերզեանը «Հեղինակի Բացատրութիւն» ենթավերնագրի ներքոյ ներկայացնում է սեփական դիտարկումները եւ յաւելումները, յղումներ տալիս նորագոյն ուսումնասիրութիւնների վրայ:

Աշխատութեան յաջորդ գլուխը՝ «Աճառեանի Սի Բանի Կարեւոր Գործերի Ներկայացումը Եւ Մեկնաբանութիւնը» (էջ 52-75), ամբողջովին նուիրուած է անուանի գիտնականի բանասիրական երկերի ներկայացմանը եւ քննութեանը՝ յատուկ ուշադրութիւն բեւեռելով վերջիններիս իրանագիտական հատուածների վրայ: Անդրադարձ է կատարում, մասնաւորապէս, *Հայերէն Արմատական Բառարանի*, *Հայոց Անձնանունների Բառարանի*, *Հայոց Լեզուի Պատմութեանը*, *Հայերէն Գաւառական Բառարանի* եւ աճառեանական մեծածաւալ ժառանգութեան մի շարք այլ նմուշների: Յատկապէս ուշագրաւ է, քէւ համառօտ, բայց նորագոյն ուսումնասիրութիւնների նիւթի ընդգրկմամբ, հայերէնի իրանական փոխառութիւնների խնդրի ներկայացումը: Պակաս կարելի է նաեւ պարսկերէն մուտք գործած մի քանի հայկական բառերի հիմնախնդրի կրկին արծարծումը: Այս բաժնում Այվազեան-Թերզեանը դրսեւորում է բաւական հետաքրքիր մօտեցումներ, վիճարկում որոշ ստուգաբանութիւններ եւ ներկայացնում առաւել ընդունելի տարբերակներ:

Գրքի վերջում յաւելուածի տեսքով (էջ 77-88) բերում է տարբեր լեզուներով գրուած Աճառեանի տպագիր եւ անտիպ յօդուածների եւ մենագրութիւնների մի լիակատար ցանկ:

Ընդհանուր առմամբ, պէտք է նշել, որ մման աշխատութիւնների լոյս ընծայումը եւ հայ գիտութեան մուաճումների ներկայացումը օտարերկրեայ ընթերցողին չափազանց շնորհակալ մի գործ է՝ մի առաքելութիւն, որը տուեալ գրքի պարագայում յաջողութեամբ կարողացել է իրականացնել դոկտ. Այվազեան-Թերզեանը:

ՎԱՐԴԱՆ ՈՍԿԱՆԵԱՆ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Հ. Աճառեան, *Հայերէն Արմատական Բառարան*, հտ. 1, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, Երեւան, 1971, էջ Բ:

² Տե՛ս՝ *Պնտական Համալսարանի Գիտական Տեղեկագիր*, քիւ 1 (1925), էջ 86-98: Յետագայ վերահրատարակութիւններից՝ “Gyorans and Tumaris (A Newly Found Secret Religion in Persia)”, *Iran & the Caucasus*, vol. 2 (1998), էջ 241-244: